



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

#### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

11 փետրվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝

Ա. Թունյանի

Ա. Վաղարշյանի

Քննության առնելով Լևոն Բարսեղյանի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

#### Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Լևոն Բարսեղյանը (ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Ա. Մելքոնյան և Ն. Հակոբյան) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հունվարի 22-ին)՝ խնդրելով.

«... «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի թ կետի 5-րդ ենթակետը, այն մասով, որ մասով նախատեսում է պետական տուրք վճարելու արտոնությունից բացառություն ճանապարհային ոստիկանության կողմից ընդունված որոշման դեմ բողոքներով, ճանաչել Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

2. Դիմողի կարծիքով՝ «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված այն փոփոխությունը (փոփոխությունը կատարվել է 2019 թվականի դեկտեմբերի 9-ի ՀՕ-305-Ն օրենքով և ուժի մեջ է մտել 01.01.2020 թվականին), որի համաձայն՝ ճանապարհային ոստիկանության կողմից ընդունված որոշման դեմ բողոքներով դիմողները չեն ազատվում պետական տուրքի վճարումից, սահմանափակում է անձանց, տվյալ դեպքում՝ դիմողի՝ դատարան դիմելու հնարավորությունները:

Իր կարծիքը դիմողը փաստարկում է նրանով, որ նույնիսկ նվազագույն աշխատավարձի՝ 1000 դրամի չափով տուգանք նախատեսող վարչական տույժը բողոքարկելու նպատակով անձը պետք է վճարի նվազագույն աշխատավարձի քառապատիկի՝ 4000 դրամի չափով պետական տուրք:

Նման իրավակարգավորումն, ըստ դիմողի, անհամաչափ է և հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության և սեփականության իրավունքներին:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և վերջինին կից ներկայացված դատական ակտերը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

սույն գործով վերջնական դատական ակտը՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, Վճռաբեկ դատարանի կողմից կայացվել է 2020 թվականի հունիսի 24-ին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի վերաբերյալ գործով վերջնական դատական ակտը կայացվել է 2020 թվականի հունիսի 24-ին, Սահմանադրական դատարանի դիմելու համար «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքը սկսվում է 2020 թվականի հունիսի 25-ից և ավարտվում 2020 թվականի դեկտեմբերի 25-ին: Մինչդեռ, Լևոն Բարսեղյանի դիմումը փոստային բաժանմունքին է հանձնվել 2021 թվականի հունվարի 20-ին: Հետևաբար՝ դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ինչը հիմք է անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 3 և 5-րդ մասերով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Լևոն Բարսեղյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝  
Անդամներ՝



Ա. Խաչատրյանի  
Ա. Թունյանի  
Ա. Վաղարշյանի

11 փետրվարի 2021 թվականի  
ՍԴԴԿՈ-6